Ավարտական հետազոտական աշխատանք

Տարիքային խումբ՝ Ավագ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն ՝ Ք.Երևան Հ.78 մսուր-մանակապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ ՝ Մարիա Թամրազյան

Ղեկավար ՝ Ավետիսյան Ժաննա

Երևան՝2022

Բովանդակություն



Ներածություն

Թեմա << Ա շուն>>

(Թեմատիկ պլանավորում)

Նախապատրաստական աշխատանք

Առավոտյան զրույց երեխաների հետ

Թեման << Ի՞նչ գիտես աշնան մասին>>

Հարցեր զրույցի համար

- Գիտե՞ք արդյոք,օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը:
- Ինչպիսի՞ն է աշունը:
- Ո՞ր կենդանիներն են աշնանը ձագուկներ ծնում:
- Որտե՞ղ են անհետանում աշնանը թիթեռները:
- Ո՞ր կենդանին է իր համար սնկեր չորացնում ծառերի վրա ՝ ձմռանը պաշար ունենալու համար :
- Որտե՞ղ են անհետանում ձմռանը գորտերը:
- Զրույցը սկսել և ավարտել աշնան մասին հանելուկներով:

Օրն է կարճանում

Ծառն է մերկանում,

Քամին է խշշում,

Այդ ե՞րբ է լինում:

(Աշուն)

Ծանոթացում շրջակա աշխարհին

Թեման <<Աշուն >>

Խնդիրները

<u>Կրթական</u>

Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող սեզոնային փոփոխությունների մասին, ընդհանրացնել և համակարգել նրանց պատկերացումները աշնան բնութագրիչ հատկանիշների մասին, աշխատանք բնության օրացույցի հետ:

Դաստիարակչական

Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ, շարունակել երեխաներին հաղորդակցել ազգային ժողովրդական մշակույթի հետ:

Զարգացնող

Զարգացնել երեխաների մեջ փոխկապակցվածության, կապերի վերականգնման կարողությունը, զարգացնել ուշադրությունը և հիշողությունը:

Բառապաշարի հարստացում

Բառապաշարի ակտիվացում, տերևաթափ, բերքահավաք, ոսկեզօծ, նախշուն, գույնզգույն, ամպամած, վարդագույն, դեղնահեր:

Նյութեր պարապմունքի համար

Նկարներ տարվա եղանակների վերաբերյալ, գունավոր տերևներ, մրգերի և բանջարեղենի, ծմեռող և չվող թռչունների նկարներ:

Պարապմունքին երեխաները ներգրավվում են ենթախմբերով :

Խաղ՝ <<Գտի՛ր քո խումբը>>:

Խաղի համար օգտագործել մրգեր և բանջարեղեն:

Աշնան բնութագրիչները – անցկացվել է զբոսանքի ժամանակ :

Զբոսանքի ժամանակ երեխաների հետ կազմակերպվել են դիտումներ՝ օրվա եղանակի, բնության երևույթների, չվող թռչունների, աշնան գույների թեմաներով:

Աշխատանք գրքերի անկյունում

Երեխաների հետ դիտել աշնանային բնություն պատկերող նկարներ: Փորձել նկարների օգնությամբ որոշել արդյո՞ք աշնանային ո՞ր ամիսն է պատկերված նկարում,երեխաների հետ քննարկել վաղ և ուշ աշնան բնութագրիչները: Վարժեցնել երեխաներին ըստ նկարների՝ երկու, երեք, չորս բառերով նկարագրություններից պատմվածք կազմելու կարողությունը:

Ծանոթացում գեղարվեստական գրականությանը

Թեմա – *Ոտանավոր ուսուցում՝ Հ. Հայրապետյանի «Աշուն»*

Կրթական նպատակը – Ամրապնդել երեխաների գիտելիքները բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների, կերպարների, թռչունների, բույսերի, բնության երևույթների, մրգերի, բանջարեղենի, աշնան բնութագրիչ հատկանիշների մասին: Ձևավորել մտքեր ինքնուրույն արտահայտելու ձեռք բերած գիտելիքներ օգտագործելու կարողություն:

Պարապմունքի ընթացքը

Վիվալդիի երաժշտության ներքո հիշեցվում է երեխաներին տարվա ո՞ր եղանակն է այժմ , որ ամիսը: Աշխատանք տանել տվյալ պահին կատարել համապատասխան նշումներ բնության օրացույցում:

Դաստիարակ - Ամբողջ շաբաթ ձեզ հետ միասին զբոսանքի ընթացքում մենք դիտել ենք, թե ինչ գույներ և գույնի երանգներ էր հագել աշունը, ի՞նչ է հատուկ աշնանը: Ի՞նչով էր բնութագրվում աշունը և ի՞նչ բացահայտեցինք միասին:

Զարգացնող

Զարգացնել վերլուծական մտածողություն, ուշադրություն, հիշողություն:

Դաստիրակչական

Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ, սովորեցնել խնայել բնության բարիքները, պահպանել բնությունը:

Բառապաշարի հարստացում

Գործնականորեն իրականացնել տերևաթափ, ոսկե, գույնզգույն, նախշուն, ուկեզօծ, դեղնավուն, բարեբեր, բազմագույն, ամպամած, բերքառատ, մրգաշատ, անձրևոտ բաառերի ուսուցումը:

Անհրաժեշտ պարագաներ

Գունավոր տերևներ, մրգեր և բանջարեղենի մուլյաժ թռչունների նկարներ ,զամբյուղներ, գուաշ, սոսինձ, գունավոր թուղթ, սպիտակ մեծ պաստառներ:

Հանելուկ՝ Ղ. Աղայան

Օրն է կարճանում,

Ծառն է մերկանում,

Անձրև է մաղում,

Այդ ե՞րբ է լինում: (Աշուն)

Դաստիարակ- Այժմ ո՞ր եղանակն է:

Երեխաներ- Աշուն է:

Դաստիարակ- Երեխաներ, այժմ եկեք պատմենք, թե ի՞նչ գիտենք աշնան մասին:

- Ինչպիսի՞ն է աշունը:Օրացույցի ո՞ր օրվանից է սկսում աշունը:
- Աշունը սկսվում է սեպտեմբերի մեկից:
- Որո՞նք են աշնան ամիսները:
- Աշնան ամիսներն են՝ սեպտեմբերի, հոկտեմբեր, նոյեմբեր:
- Ի՞նչ տոներ ենք տոնում աշնանը:
- Գիտելիքի օրը, Անկախության օրը:
- Ուսուցչի օրը, Մեր քաղաքի տոնը,Բերքի տոնը:
- Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում կենդանիների և բույսերի աշխարհում, որ կենդանին է աշնանը ձագուկներ ունենում:

Երեխաներ - Աշնանը կենդանիներից ձագուկներ է ունենում նապաստակը:Բզեզները ձու են ածում և սատկում:Միջատները մտնում են ճեղքերը, կուչ են գալիս, ծառերի կենղևների տակ և այդպես էլ ձմեռում:Սկյուռը պաշար է հավաքում ձմռան համար:Գորտերը ծածկվում են տիղմի մեջ կամ թաքնվում ջրամբարի հատակում:

Դաստիարակ- Ի՞նչ է փոխվում թռչունների կյանքում և վարքագծում, ո՞ր թռչուններն են չվում և ի՞նչու:Որո՞նք են մնում մեզ մոտև ձմեռում:

Երեխաներ -Կան թռչուններ, որոնք չվում են տաք երկրներ՝ ծիծեռնակը, արագլիը, կռունկը, սագերը,սարյակները, իսկ մեզ մոտ մնում են ձմեռելու կաչաղակները,ճնճղուկներ, ագռավներ:

Դաստիարակ-- Էլ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում աշնանը բնության մեջ:

Երեխաներ - Աշնան սկզբում տաք, արևոտ եղանակ է լինում, իսկ վերջում սկսում են օրերը ցրտել:Երկնքում հաճախ կուտակվում են սև ամպեր,լինում են ամպրոպներ,անձրև է գալիս,թչում է սառը քամի՝ քամին պոկում է ծառերը տերևները ու քշում հեռու-հեռու:

Դաստիարակ - Ի՞նչերն են հասունանում այգիներում ու բանջարանոցներում:

- *Երեխաներ* - Այգիներում և բանջարանոցում հասնում են մրգեր և բանջարեղեններ, մարդիկ կատարում են բերքահավաքԼ:Կատարում են աշնանացան:
- *Դաստիարակ* -Երեխանե՛ր, քանի որ դուք նկարագրեցիք աշունը, այժմ ժամանակն է գնալ աշնանային զբոսանքի, տեսնելուն, թե ինչպես է մանկապարտեզի այգին աշնանը:

- Երեխաները խմբով իրականացնում են երևակայական զբոսանք խմբում:Նրանք համեմատում է աշնան տերևները նախօրոք հավաքված դրանց նմանեցնում տարբեր երկրաչափական մարմինների: Բացատրում են, թե ինչու են տերևները խշշում:
- *Երեխաներ* – Աշնանը մեր շրջապատում շատ գույներ կան, բայց ամենից շատ դեղինն ու նարնջագույնն է:

Աշխուժացնող խաղ՝ «Տերևներն ու քամին», հնչում է հատված Վիվալդիի «Տարվա եղանակները» ստեղծագործությունից: Տերևները հանդարտ իրենց տեղերում են, քամու ժամանակ սկսում են արագ պտտվել:

Դաստիարակ - Աշունը նաև տարվա ամենաբերքառատ եղանակն է:Մրգերը, բանջարեղենը, աշնանային տերևները ու ծաղիկները իրենց տարբեր գույներով գեղեցկացնում են մեր շրջապատը: Աշունն ամենաեռանդուն աշխատանքների ժամանակն է:Մարդիկ շտապում են հավաքել բերքը, պահածոներ են պատրաստում, մի մասը ամբարում են ձմռանը թարմը օգտագործելու համար: Դաշտում ցորենը ցանելու համար մարդիկ վարում են հողը: Բերքահավաքի ժամանակ բոլորը ուրախ են և օգնում են միմյանց:

Ասացվածքներ՝ աշնան մասին

Ով աշխատի, նա կուտի:

Ձեռք ձեռքի որ տանք, սարեր շուռ կտանք:

Աշնան մեկ օրը՝ տարի է կերակրում:

Դաստիարակ - Աշունը այնքան գեղեցիկ է, որ մեր բանաստեղծները, երգահանները ու նկարիչները գովերգել են իրենց ստեղծագործություններում: Եկեք վերհիշենք, թե հայ ո՞ր անվանի նկարիչներն են իրենց ստեղծագործություններում պատկերել աշունը:

Երեխաներ – Մ. Սարյան «Աշնանային ծաղիկներ», Գ. Բաշինջաղյան «Աշուն», Հ. Կոջոյան «Աշուն»: Բանաստեղծներից աշնան գեղեցկությունը գովերգել է Հ. Թումանյանը, Հ. Հայրապետյանը:

Երեխաները արտասանում են Հ. Թումանյանի «Աշուն» ոտոնանավորը:

Դաստիարակ - Ի՞նչ բառերով կարող ենք նկարագրել աշունը:

Երեխաներ – Ոսկեզօծ աշուն, գեղեցիկ աշուն, գունագեղ աշուն, բերքառատ աշուն, անձրևոտ աշուն, աշնանային տերեևաթափ, դեղնած աշուն:

Դաստիարակ - Երեխաներ այժմ եկեք աշնանային մեր տպավորությունները ներկայացնենք թղթի վրա: Ի՞նչ գույներ տեսանք մեր մանկապարտեզի այգում:

<<*Ջան*-ջան աշուն է>> երգի ներքո մի մասը երեխաների թթու դրեց, մի մասը աղցան պատրաստեց, մի մասն էլ իրենց աշնանային տպավորությունները ներկայացրեցին թղթի վրա:

Նկարչություն, ապլիկացիա

Թեման՝ «Ի՞նչ է տալիս մեզ աշունը»

Նյութեր պարապմունքի համար

Գուաշ, սպիտակ թուղթ, գունավոր թղթեր, նախօրոք կտրտած գունավոր տերևներ, մատիտներ, սոսինձ, մրգեր:

I
YOU

I
YOU

Թեմայի ամփոփում

Դաստիարակ - Ի՞նչ նվիրեց մեզ աշունը:

Երեխաներ- Աշունը մեզ նվիրեց ուրախություն, գույներ, բերք, արև, տերևաթափ:

Թափվեցին տերևները

«Ցտեսություն աշուն», «Ողջույն ձմեռ»

Օգտագործված գրականության ցանկ

- <<Մայրենի լեզվի ավագ խմբի ուսումնամեթոդական ձեռնարկ>> , Ս.Չիբուխչյան, Լ.Սարգսյան, Երևան 2011թ.
- <<Նախաշավիղ >>, Երևան 2011թ.
- <<Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոական տարիքում>>, Կրթական բարեփոխումների կենտրոն, Երևան 2007թ.
- Մանկական ստեղծագործությունների ընտրանի